Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ծովասարի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ներառական կրթության առանձնահատկությունները սովորողի իրավունքներն ու պարտականությունները, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը «Մայրենի» առարկայի դասավանդման ընթացքում, նրանց ներգրավվածությունը դասին

Վերապատրաստող, մենթոր՝ Թամարա Իսոյան

Ուսուցիչ՝ Սաթենիկ Եգորյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ---------- 5

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ---------- 8

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ---------- 9

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ---------- 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայրենի լեզուն, գրականությունը, օտար լեզուները, միասին վերցրած, կազմում են բանասիրության հանրակրթական ոլորտը, որ շփման և հաղորդակցման կարևորագույն միջոց է, ինչպես նաև տարբեր մշակույթների փոխազդեցության ամենակարևոր ոլորտը: Այդ իսկ պատճառով հասարակության լիարժեք անդամ և լավ քաղաքացի դաստիարակելն ուսուցչի աշխատանքի կարևորագույն մասն է:

Ներառումը գաղափար է, որը միավորում է տարբեր կարիքների տեր աշակերտներին, նրանց ընտանիքներին, մանկավարժական կոլեկտիվի անդամներին և համայնքի անդամներին՝ ստեղծելու դպրոցներ և սոցիալական հաստատություններ , որոնք հիմնված են համագործակցության վրա:

Մայրենին՝ որպես ուսումնական առարկա նպաստում է սովորողների ներառմանը, զարգացնում է նրանց ճանաչողական կարողությունները, լեզվամտածողությունը և խոսքը: Ներառական կրթությունը ստեղծում է հնարավորություններ բոլոր երեխաների համար, որ նրանք դառնան սովորողներ, իրավունք ունենան օգտվել հանրակրթական չափորոշիչներին համապատասխան կրթության իրավունքից: հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողների իրավունքները , պատվի ու արժանապատվության պաշտպանությունը կարևոր նշաձող է ժամանակակից աշխարհում, ուստի ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկի ավելացմանը զուգընթաց բարեփոխումներ են տեղի ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթական կարիքների ընթացակարգում:

Թեմայի արդիականացումը: Ներառական կրթության գաղափարի երաշխիքը մարդու կրթության երաշխիքն է: Ավելի արդար հասարակության հիմքը ներառականությունն է: Ներառումը արժեքային համակարգ է. այն երեխային տալիս է հասանելիության հավասարաչափ իրավունք կրթության բոլորն մակարդակներում:

Հետազոտության օբյեկտը:

ՀՀ հանրակրթական դպրոցներում, միջին և ավագ դասարաններում ներառական ծրագիրը իրականացվող գործունեություն է:

Հետազոտության առարկան:

Ներառական կրթության իրականացման գործընթացի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունն է միջին և ավագ դպրոցում:

Նպատակը: Ուսումնասիրել ներառական կրթության իրականացման գործընթացի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, միջին և ավագ դպրոցում նրանց դերը և նշանակությունը:

Հետազոտության խնդիրները:

1. Բացահայտել և որոշել ուսումնասիրվող խնդրի մշակման աստիճանը:
2. Ուսումնասիրել և վերլուծաբար ներկայացնել ներառական կրթության պլանավորումը և գործածումը միջին և ավագ դպրոցում:
3. Վերհանել Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության ծրագրերի արդյունավետության ցուցանիշները միջին և ավագ դպրոցում:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտությունը իրականացրել եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Քանի որ այս դասարանում 6 աշակերտ ունեն ներառման կարիք:

Ուսումնասիրության գիտահետազոտական մեթոդները:

- Մասնագիտական գրականության վերլուծություն
- Դիտում
- Զրույց
- Մասնագետի հետ համագործակցություն
- Դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրություն

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության հիմնախնդիրը համակողմանի վերլուծության հնարավորություն է տալիս, այդ առումով գնահատել

ներկա իրավիճակը, ինչպես նաև կանխորոշել հետագա պլանները և իրականացվող գործընթացները:

Հետազոտության գործնական նշանակությունը ներառական կրթության առանձնահատկությունների միջին և ավագ դասարաններում կիրառվող անհրաժեշտ միջոցների, մեթոդների և մանկավարժական մոտեցումների համակարգ է , ինչպես նաև գործնական առաջարկների մշակումն ու կիրառումն է:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, բուն բովանդակությունից, փորձարարական հետազոտությունից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հասկացություն ներառական կրթության մասին:

Այսօր աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական խնդիր ունեցող մոտ կես միլիարդ մարդ (2001, ԱՀԿ): Այդ մադիկ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքում: Եղած իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությունը՝ սերմանելով հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ:

Այս տեսանկյունից ուշագրավ է ներառական կրթության հասկացության նշանակությունը, որն իրենից ներկայացնում է մի գործընթաց, որը հնարավորություն է տալիս կրթության առանձնակատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներին հավասար իրավունքներով կրթություն ստանալ դպրոցում: Այն իր մեջ ներառում է բազմազան կարիք ունեցող երեխաներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին:

Ներառական կրթությունը այն կրթությունն է, որի ժամանակ բոլոր աշակերտների հանդեպ պետք է ապահովվի հավասար, բայց ոչ միակերպ վերաբերմունք ՝ ստեղծելով սովորողների հետ համագործակցող, աջակցող, տրամադրող միջավայր, որում սովորողը պետք է ստանա անհրաժեշտ ծառայություններ, որպեսզի երեխան կարողանա հասնել

հաջողության: Այդ միջավայրը պետք է ապահովի սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի, արժանապատվության կարևորագույն հարցեր, որպեսզի երեխան կարողանա իրեն դրսևորել առավելագույնս: Այդ միջավայրը նպաստում է միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի ձևավորմանը:

Ներառական կրթության ծրագիրը հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին ներառելու բարդ, առաջանցիկ և ճկուն ուսումնական ծրագրերում:

Ներառական կրթությունը աշակերտների համար կրթություն ստանալու հիմնական ռազմավարությունն է, որի նպատակն է ձևափոխել կրթական ծրագրերը և վերացնել խաչընդոտները՝ հաշվի առնել աշակերտների անհատական պահանջները և կարիքները:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցումների՝ բարելավելով մարդկանց տարատեսակ կրթական պահանջները: (Ալեն և Շվաց, 2001թ.): Ներառական կրթության շնորհիվ կշահեն ոչ միայն առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները, այլ նաև բոլոր երեխաները: Ներառում չի նշանակում բոլորին ձուլել կամ միատեսակ դարձնել: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացը բազմազան և ճկուն ապահովելու համար: Այսպիսով՝ բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց պատրաստվել կյանքին: Իմ կարծիքով միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի և փոխըմբռնման հաստատմանը, որը կնպաստի սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությանը:

Ներառական կրթությունը՝

- ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել
- ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը:
- նպաստում է ներառական հասարակության կառուցման հեռահար ռազմավարական գաղափարների իրականացմանը:

Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլոր սովորողների համար՝ անկախ առանձնահատկություններից: Ներառում նշանակում է բազմազանություն, բարենպաստ պայմանների ստեղծում բոլոր երեխաների համար հավասար պայմաններ, որ սովորողները իրենց մեկուսացած չզգան:

Այն չի նշանակում միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ ողջ կրթական համակարգի բարեփոխումներ:

Ներառական կրթության առանձնահատկությունները կայանում են նրանում, որ դրանք ապահովում են կրթական հատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների համար.

- Մարդու արժեքը կախված չէ նրա կարողություններից և հաջողություններից
- Յուրաքանչյուր երեխա և մարդ ընդունակ է զգալ և մտածել
- Յուրաքանչյուր երեխա հաղորդակցման և լսելի լինելու իրավունք ունի
- Բոլոր երեխաները ունեն մեկմեկու կարիք:

✓ **Միջառարկայական ինտերգրում** – Հայոց լեզվով օտարազգի հեղինակների գործերի ընթերցումը և մյուս առարկաների ինտերգրումը և միջառարկայական կապերը նպաստում են սովորողների կողմից աշխարհի և երևույթների միասնական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների և գաղափարների համադրմանը:

✓ **Բազմագործառնությունը** – կարող է հանդես գալ և՝ որպես ուսուցման նպատակ, և՝ որպես միջոց ձեռք բերելու գիտելիքներ տարբեր բնագավառներից:

Գրականության ուսուցման հիմնական նպատակներն են.

✓ Յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկ

✓ Լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետում և՝ կյանքում կիրառելու հմտություն, և՝ գրագետ ու զարգացած դրսևորման միջոց:

✓ Սովորողների հագևոր և մշակութային ոլորտի զարգացում

✓ Ընդլայնել սովորողների գրագետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները

- ✓ Նպաստում է սովորողի գեղագիտական և գեղարվեստական ճաշակի ձևավորմանը:

Գրականության ուսուցման հիմնական հեռանկարային նպատակը սովորողներին ազգասիրության և ազգապահպանության, բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելն է:

Քանի որ տարրական և միջին դպրոցի V – VI դասարաններում ժամաքանակը բավարարում է թեմայի յուրացմանը, ապա VII դասարանից սկսած աշակերտների համար մի փոքր դժվար է ամբողջովին յուրացնել գրականության ուսումնական ծրագրերը, հատկապես միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների համար, այդ իսկ պատճառով ես որոշեցի իմ դասաժամերին այդ աշակերտների համար կիրառել ներառելու ուսուցման մեթոդը՝ պահպանելով նրանց ներգրավվածությունը գրականության դասաժամերին: Այն աշակերտները, որոնք հետ են մնում կրթական ծրագրերից և ունեն խնդիր դասապրոցեսին մասնակցելու՝ նրանք կաշխատեն անհատական տեքստային առաջադրանքների վրա՝ զարգացնելով գրելու, հիշելու հմտությունները, ճիշտ ու գրագետ բառերի արտասանությունը և կցուցաբերեն հետաքրքրություն առարկայի հանդեպ հայեցի և արժանապատիվ քաղաքացի ձևավորվելու ճանապարհին:

Ուսուցչի դերը ներառական կրթության մեջ

Ֆլորիանը և Ռուսը (2008) պնդում էին, որ «Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է պատրաստվել մասնագիտության, որը ապահովում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվություն բարելավելու բոլոր երեխաների ուսուցումը և մասնակցությունը կրթական գործընթացին» (էջ 556):

Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է ուսուցչի որոշակի գիտելիքներ, ունակություններ և կարողություններ: Այս տեսանկյունից ուսուցիչը կարևորագույն դեր է խաղում կրթության որակի ապահովման և բարելավման հարցում, միաժամանակ ուսուցչի աշխատանքի որակը երևում է սովորողի հաջողություններով՝ ներառյալ դասարանային միջավայրային պայմանները:

Ուսուցիչը, լինելով համընդհանուր կրթական համակարգի ներդրման գործընթացի կենտրոնական օղակ, ունենալով աջակցության և ուղղորդման կարիք:

Ժամանակակից հասարակության մեջ հասարակության կրթական համակարգի հրամայականի համընդհանուր ներառման ֆոնին հավասար հնարավորությունների ապահովումն է, որը ենթադրում է բարդ, փուլային գործընթաց, որը պետք է սկսվի յուրաքանչյուր անհատի, մանկավարժի, ծնողի, ապա նաև աշակերտի գիտակցությունից: Լինում են պահեր հատկապես ուսուցիչների պարագայում, ներառումը որպես գործընթաց առաջանում է հիմնավորված և չհիմնավորված վախեր, սեփական ուժերի նկատմամբ թերահավատություն:

Այդ իսկ պատճառով ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխաների համար առավել նախընտրելի մոտեցում է: Այս շրջանակներում ուսուցիչների դերն է ոգևորել հատուկ կարիքներով երեխաներին ընտրություն կատարել ինչքան հնարավոր է շատ, լինել ազատ, սովորել իրենց միջավայրում և հաջողություններ ունենալ: Ուսուցիչները խթանում են ուսումնական գործընթացը՝ ուղղորդելով, ոգևորելով, համագործակցելով և փորձելով կիրառելով ուսուցման բազմակի մեթոդներ, որոնք նախատեսված են տարբեր ուսումնական ոճերի համար և հեշտացնում են ընտրություն կատարելու կարողությունը աշակերտների կողմից:

Մասնագետների մոտեցումները

Այսօր արդեն ներառական կրթության իրականացնող դպրոցների մասնագետները նշում են այն փաստը, որ հանրակրթական դպրոցում հնարավորություն ունեն սովորելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները և անառակելի է այն տեսակետը, որ հանրակրթական դպրոցներում նրանց ներգրավվածությունը բերում է ունեցած հնարավորությունների անասելի մեծ առաջընթացի:

Ներկայիս գոյություն ունեցող փաստաթղթերը ավելի լավ են հիմնավորում իրավիճակը, օրինակ՝ ԱՈՒՊ կազմելիս կրթական այն խնդիրներ ու նպատակները, որ տարեսկզբին դրվում էին մասնագետի առջև, արդեն իսկ տարվա կեսին անպայման որոշակի առաջընթաց են ունենում, քանի որ շատ դեպքերում երեխաների առաջընթացը և

ցուցաբերած ակտիվությունը եղած կանխատեսումներից ավելին են լինում: Որպես կանոն պայմանավորված է մի քանի գործոնով.

- Կրթական
- Սոցիալական
- Հոգեբանական

Իմ կարծիքով առաջնային դերերից մեկը սոցիալական համագործակցությունն է, քանի որ երեխան, սովորելով դպրոցում, հնարավորություն է ունենում ներգրավվել ուսումնական տարբեր գործընթացներում, տեսնել և զգալ դասընկերների կարողություններն ու հմտությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն առօրյա կյանքում: Այսօր նրանցից շատերը ապահովում են պետական չափորոշչով սահմանված համապատասխան գիտելիքներ և կարողություններ:

Մեր երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում, ներառական կրթության զարգացման արդյունավետությունը ի սկզբանե իր զարգացման ընթացքում ունի բացթողումներ և շտապողականություն: Քանի որ առաջ եկած դժվարությունները խուճապի պատճառ հանդիսացան: Այնուամենայնիվ, ներառական կրթությունն ունի մասսայականություն և հանդիսանում է հասարակության լավագույն դաստիարակության մեթոդ: Այդ պատճառով ներառական կրթությունը ամբողջ աշխարհում դեռ ունի անցնելու երկարատև ճանապարհ:

Ըստ մասնագետների՝ ներառական կրթության զարգացման արդյունավետությունը կախված է բարեխիղճ աշխատողից և գրագետ լուծումներից: Ժամանակակից աշխարհում մարդը ձևավորվում է խմբակցության մեջ:

Իմ կարծիքով եթե սովորողը գտնվի կրթական այնպիսի տարածքում, որտեղ խրախուսվում է սոցիալական համերաշխությունը, ներդաշնակությունը և փոխադարձ հարգանքը միմյանց նկատմամբ, ապա ինքն էլ կսովորի:

Ներառական կրթությունը դարձել է ժամանակակից մանկավարժության կարևորագույն մասը: Այսօր ամբողջ աշխարհն արդեն ընդունում է հատուկ կարիքներով անձանց սոցիալական ներառման գաղափարը: Ուսուցումը պետք է խթանի, ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացմանը:

Երեխաները ,միասին սովորելով, սովորում են օգնել և աջակցել միմյանց, միասին ապրել և կրթություն ստանալ: Սակայն, ցավոք, մեր դպրոցները դեռ չունեն շենքային համապատասխան պայմաններ, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների բացակայությունը բավականին դժվարացնում է արդյունավետ աշխատանքը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

3. Առաջին խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը իրականացրել եմ Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին, այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել անհատական տարբերակված ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստով ճիշտ աշխատելու հմտությունների ձևավորմանը, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում է 29 աշակերտ՝ 17 տղա և 12 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություններ և հմտություններ: Այս դասարանում «Մայրենի» անցնում են 7 դասաժամով: Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին և ցածր կարողությունների տեր վեց աշակերտների համար՝ կազմակերպելով տարբերակված ուսուցում անհատական թեստերի միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբերակված բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կարողությունները և հմտությունները:

3.2. **Փորձարարական դաս – 1**

Այսօրվա դասը վերաբերում է Գ. Մահարու «Իմ տատը» /հատված «Մանկություն» վեպից/: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ /տե՛ս դասապլան 1, էջ - /, որին հատկացված է հինգ դասաժամ: Դասաժամը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. /տե՛ս դասագիրք, առաջադրանք 1, էջ 35, էջ 38/:

Բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով, որովհետև հանձնարարված էր վարժ և սահուն կարդալ և բացատրել: Քննարկվեցին տնային առաջադրանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը: Ամփոփվեց օրվա դասը, որպեսզի ստուգվեն սովորողների ձեռք բերած գիտելիքները տվյալ նյութի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց 4 մասի: Գրատախտակին աշակերտների միջոցով գրվեց .

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի հատվածը կարդալիս	Ի՞նչ զգացի	Ի՞նչ սովորեցի

Չորս աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ մնացած սովորողները աշխատում էին իրենց տետրում՝ հնչեցնելով իրենց համար անհասկանալի հարցեր, խմբային քննարկման միջոցով ստանում սպառիչ պատասխաններ:

Դասը քննարկելուց հետո վեց ցածր առաջադիմությամբ սովորող աշակերտներ գրեցին տարբերակված թեստային աշխատանք:

Բաժանվեցին թեստային առաջադրանքները, բացատրվեց հանձնարարությունը: Աշխատանքն աշակերտներին ծանոթ էր, քանի որ մինչ այդ դասարանում տարբեր առաջադիմության տեր աշակերտներ կատարել էին նման աշխատանքներ: Տարբերակված թեստերը երկու տարբերակով էին /ա,բ/, որոնք բաժանվեցին աշակերտներին՝ անհատապես աշխատելու համար:

Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց /գրել կարճ շարադրանք «Իմ տատը»: Բարձր առաջադիմության տեր աշակերտները դասագրքից առաջադրանքի վրա /տե'ս տեքստային -էջ 36/ գրեցին աշխատանքային տետրում: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող սովորողները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրից իմ օգնականի միջամտությամբ և օգնությամբ աշակերտները գրում էին աշխատանքները: Աշխատանքը ավարտելուց հետո հավաքվեց և հաղորդվեց նոր դաս «Իմ տատը» կարդալ, պատմել: Կարճ

դասախոսությամբ ՝ ստեղծելով բուռն քննարկում թեմայի շուրջ: Դասի հաղորդման ժամանակ խոսվեց ծնողների, նրանց ծնողների՝ տատերի դերը մեր կյանքում, հարգանք մեծի նկատմամբ, ազատության, պատվի ու արժանապատվության, մանկության տարիների և հայրենի տան մասին: Սովորողները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցեր: Հատված- հատված իմ կողմից ընթերցվեց դասանյութը և տրվեցին լրացուցիչ բացատրություններ:

Դասը ավարտվեց տնային առաջադրանքի հանձնարարումով. կարդալ դասանյութը, դուրս գրել դուր եկած հատվածը և պատմել: Կազմել թեստ՝ տրված պահանջին համապատասխան: Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կարդալ «Իմ տատը» հատվածի բնագիրը և անել ծաղկաքաղ:

Այսպիսով տարբերակված ուսուցումը ստեղծում է մոտիվացիա, որ տարբեր խմբերում առաջանա առողջ մրցակցություն՝ բարելավելով ուսուցման որակները:

Թույլ սովորող երեխաների մոտ առաջանում է մրցակցություն մեկ խմբից տեղափոխվելու ավելի ուժեղ խումբ, սովորել միաժամանակ տարբեր ձևերով: Իմ կատարած հետազոտության ընթացքում ես պարզեցի, որ աշակերտները սովորում են աշխատել արագ, շուտ կողմնորոշվել և օգնել խմբի անդամներին: Նման մոտեցման դեպքում ոչ միայն բարձրացավ երեխաների սովորելու ձգտումը, այլև սովորեցնեց օգնել և աջակցել ընկերներին, նաև մրցակցել և հաղթել, արտահայտել կարծիքներ, ունենալ սեփական դատողություններ: Տրված առաջադրանքը ճիշտ և արագ կատարելու համար ես կարողացա տարբերակված ուսուցման մոտեցումով պարզել, և թույլ սովորող աշակերտներին հավասարապես ներգրավել դասին և նրանց մեջ առաջացնել հետաքրքրություններ ուսումնական նյութի նախապատաստվելու և ներկայացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ներառական կրթությունը կրթական ծրագիր է, որն ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ներշնչում է պատկանելության զգացում: Ստեղծվում է առանձնահատուկ պայմաններ կրթական համակարգում կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՐԿՈՒ) անձանց համար: Պայմաններ ստեղծում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց հասարակության մեջ ներգրավելու համար:

Այսօրվա հրամայականի պահանջն է՝ բոլոր բարեգործական և հասարակական կազմակերպությունները բարելավեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջները՝ ստեղծելով հավասար միջավայր բոլորի համար՝ լիարժեք կյանքին պատրաստելու համար:

Իմ կարծիքով ներառումը կստեղծի հասարակության վերաբերմունքի փոփոխություն՝ ի շահ նման անձանց՝ հասարակությանն ինտեգրվելու և լիարժեք անդամ դառնալու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կրթության հատուկ կարիքների զործունեության կառուցվածքը, 2001

«Ներառումը դպրոցական ուսումնական հաստատություններում» մեթոդական ուղեցույց ձեռնարկ, 2021